




Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԻՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Իգական բարձրագոյն
ուսումը. Նամակ Գորիսից. Նամակ Աղստաֆայից.
Նամակ Վերին-Աղուկից. Նամակ Շուշուց.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ձրիդ-
բիւ կայսրի վերջին ժամերը. Արտաքին լուրեր.
—ԽՍՈՆ ԼՈՒՐԵՐ. — ՀՆԱՅԿԻՆԵՐ. — ԲՈՐՍՍ. —
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻԳԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՈՒՍՈՒՄԸ

Որքան ուրախալի տեսարան է ներկայանում
մարդու, երբ մտնելով ժընէվի համալսարանը նա
ուսանողների շարքում տեսնում է և ուսանողների-
ներին: Այս ակադեմիա դասարանութիւնը. դուք մի
հայեացք էք ձգում ձեր շուրջը և ինչ էք տեսնում.
—ուսանողներից լուրջ դէմքով և լարված ու-
շաղթութեամբ լսում են ուսուցչապետին (պրոֆե-
սորին) և արձանագրում դասախօսութիւնը:

Շվեյցարիայի համալսարանների դռները բաց
են իգական սեռի համար ևս, և այն օրերիցն են
ու տիկնիկները, որոնք ձգտում են բարձր ուսում
ստանալ, շտապում են դէպի Շվեյցարիա և ա-
ռանց մի օր և է արդիւնք ընդունվում են: Ժընէ-
վի համալսարանը ունի այս տարի մօտաու-
րապէս 40 ուսանողներից, որոնց մեծամասնու-
թիւնը կազմում են հրէայ-օրիորդներ, ապա լեհեր,
մի քանի ռուս, ֆրանսիացի և ամերիկացիներ հայ:
Մենք ժընէվում ունենք երկու ուսանողների, եր-
կուսն էլ, ըստ տմանց երեք, Յիւրիստաճ Բոլոյն էլ
ուսանալու են: Ինչ մեծ առաջադիւթիւն, ինչ
արդիւնաւոր տղայ. չորս միլիոն ժողովուրդ ունի
չորս ուսանողների, ուրեմն միլիոնի մէջ: Միթէ
իրաւումը չունենք պարծենալու,—որ հայերս մեծ
առաջադիւթիւն ենք արել: Ինչպէս չէ, մա-
նաւանդ պօսեցիք, որոնք չեն բարեհաճել տալ
մի ուսանողների անգամ: Բայց ներողութիւն, սը-
րանք իրաւունք ունեն, որովհետեւ դրաւլած են
ազգային ծանրակշիւ. հարցերով և մի բոլոր ա-
ղաւթ չեն այդ մասին խորհելու, և վերջապէս
հարկ էլ չը կայ, «վանս դի առանց ատոնց ալ ազ-
գերնիս կառավարիսէ կորս»:

Կանանց բարձր ուսումը (կրթութիւն և ուսում
բաժնիքը չը պէտք է խառնել և մի և նոյն նշա-
նակութեամբ գործ դնել. իրաւունքները ունի իր
առանձին նշանակութիւնը) ունի մեծ նշանակու-
թիւն թէ հասարակական, թէ սոցիալական և թէ
ընտանեկան կեանքի համար. այս ոչ ոք չէ կա-
րող ուրանալ: Այնուհետ այստեղ շուտիւրում է
և կանանց իրաւունքների հարցը: Կանանց բար-
ձր ուսում ստանալը սերտ կապ ունի նրա
իրաւունքների հետ. մէկը միւրի հետեւութիւն
է: Կանանք ունենալով բարձր ուսում, հեշտու-
թեամբ կարող են ձեռք բերել իրանց անբու-
նաբարեւի, բայց բռնաբարւած իրաւունքը, ունե-
նալով հաւասար իրաւունք և անկախ կեանք,
հեշտութեամբ կարող են բարձր ուսում ստանալ:
Այնպէս որ, խօսելով մէկի մասին, խօսած կը
լինենք և միւրի մասին:

Կանանց իրաւունքների հարցը նոյնպէս օրական
և եռացող խնդիր է արեւմուտքում, ինչպէս բանա-
րական հարցը, թէ և մի քանի հայերի խնդրով
որոնք հազիւ երկուստեան ուսումնաւարանի աշակեր-
տի զարգացումն ունեն և մի և նոյն ժամանակ
թղթակիցներ են համարվում, այս հարցը հասցած
է և չարժէ դրա մասին խօսել: Արեւմուտքում կա-
նանք հետզհետէ ձեռք են բերում իրանց իրա-
ւունքները, և չը պիտի կասկածել, որ կը գայ մի օր,
որը շատ հեռու չէ, երբ կինը կը հասնի այդ ցան-
կալի վիճակին և այն ժամանակ, մենք համոզված
ենք, որ հասարակական, ընկերական, ընտանեկան
կեանքի մէջ փոփոխութիւն կընկնի: Կերպարա-
նափոխելով մեր այժմեան կեանքը, ստեղծելով
բոլորովն նոր կեանք, նոր աշխարհ, և այն հար-

ցերը, որոնք այսօր ասպարէզի վրա են և մարդ-
կութեան ուշադրութիւնն իրանց վրա են դարձ-
րել, որոնց լուծումը հանդիպում է խիստ խոչնդոտ-
ների, այն ժամանակ նրանք հեշտութեամբ իրանց
լուծումը կը ստանան: Մենք կարծում ենք, եթէ
կեանքի մէջ կինը իրաւունք ունենար հաւասար
գործելու մարդկանց հետ, այն դատութիւնները,
այն վշտացուցիչ և ոչնչացնող երեւոյթները, ո-
րոնց մենք պատահում ենք իւրաքանչիւր քայլա-
փոխում, այսօր գոյութիւն չէին ունենայ, այսօր
մարդկութիւնը այս յուսահատական դրութեան
մէջ չէր լինի: Գտնի որ մենք գիտեմք յետ
ենք միշտ նրանց, քանի որ մենք աշխատում ենք
նրանց պահել հարեմական կեանքի մէջ, քանի որ
մենք տարբերութեամբ բռնանում և արհամարում
ենք նրանց, քանի որ կին անկող մենք հակա-
նում ենք մի էակ, որը ծնվել է ծառայել մենք,
որը ստոր է մեզանից, որը չունի կամք, որի մէջ
մենք գտնում ենք «կնիկ ու լիւթիւն» և ոչ «մար-
դ ու լիւթիւն», որը մեր խնդրով բացի ընտանեկան
գործեր վարելուց, ուրիշ բանի ընդունակ չէ, որը
միշտ պիտի եղծարկվի մեր կամքին, մեր վայ-
րենի քմահաճութեան, որը չը պիտի համարձակվի
ուրիշ հայեացք ձգել մարդու վրա, որը պիտի մի-
միայն երկիւյց բերի, նրան հոգ տանի և այլն,—
դեռ մենք չենք կը պատահենք յուսահատական օ-
պէնքերի և մեր հասարակական կեանքը հետզհետէ
կընկնի, հետզհետէ կը փչանայ և կարտագրի հը-
րէշներ և հրէշաւոր երեւոյթներ: Այնք, ունենալով
բարձր կրթութիւն և հաւասար իրաւունքներ, նա
մի և նոյն ժամանակ և ձեռք է բերում անկախ
կեանք, նա այլ ևս չէ ծանրանում անհատի վրա:
Եթէ այսօր կանայք մեծ մասամբ ներկայանում են
մեզ պէնսիւն, եթէ նրանք ակնի մտածում են դե-
ղեցկութեան, զարդանքի, հագուստի, անուշա-
հոտ իւղերի և այլ այդ սուսակ բաների վրա, այստեղ
ոչ թէ կինն է մեղաւոր, այլ ներկայ հասարակա-
կան կեանքը. նա նրան ստիպում է այդպէս լի-
նել և նա եղծարկվում է կեանքի հոսանքին: Գիտե-
այս ստիպել դրութեամբ կինը ունի իր ազդեցու-
թիւնը մարդու կեանքի և վիճակի վրա: Այս ա-
զդեցութեամբ համար ոչ թէ մենք հեռու կը դը-
նանք և դատողութեանց մէջ կընկնենք, այլ ճշն
այդ բռնացողներին, կանանց արհամարհողների խօս-
քերը առաջ կը բերենք իբրեւ փաստ: Ահա թէ
ինչ է ասում մեր ժողովուրդը.—«տուն շինողն էլ
է կինը, քանդողն էլ»: Եւ վերջապէս քանի
անգամ մենք լսած կը լինենք,—«մի, երանի
նրան, ով ունի իր սրտի ուղած կինը, ևս
ամենաբարձր զանքն է կը լինի աշխարհում»,
եթէ կինն սրտով լինել, Աստուած, ոչինչ չէ
ուղում, միայն լաւ մի կ'իւր և այլն: Սա ցոյց
է տալիս, որ ժողովուրդը ճանաչում է կնոջ մէջ
մի ոյժ, որը յատուկ է այդ սեռին, սրանով խոս-
տովանում է նա, որ կնոջը շատ բան է կախ-
ված, սրանով խոստովանվում է նա, որ կինը
ունի իր ազդեցութիւնը մարդու վիճակի, կեանքի
հանդամանքների վրա և այլն: Մենք խոստովան-
վում ենք այս, մեր մէջ ճանաչում ենք, բայց
կեանքի մէջ արհամարում ենք և կաշկանդում
կնոյ ձեռքերն ու ոտքերը, որպէս զի նա չը
կարողանայ քայլել անէլ դէպի առաջ, և սրանով
ոչ միայն մենք հարուածում ենք նրան, այլ և
հինգ մեզ էլ մենք սրանով դնում ենք առե-
ւի վատ վիճակի մէջ, սրանով հեռացնում ենք
մեր ուժեղ օգնականին և մնում ենք ասպարէզի
վրա մենակ. իսկ մեր ոյժերը չը ներելով գործել
մենակ, շատ հեշտութեամբ ընկնում ենք թշուա-
ւութիւնների մէջ:

Ահա մեր այս հակապողտիւնն շնորհիւն է,
որ չունենք ուսանողներ, ահա գլխաւոր պատ-
ճառներից մէկն էլ այս է, որ մեր կեանքը առ-
կուր մի պատկեր է ներկայացնում, որի մէջ
կուտում են հաղթարարները: Երբ մասուլք բարոյա-
կան պարտք է համարում հարուածել ժողովուրդի
մէջ դարբնով արմատ բռնած հոտած, փտած գա-
ղափարները, երբ նա ցանկանում է արմատախիւ

անել այդ և նրա տեղը դնել թաւա, նոր—մարդ-
կութեան ստեղծած վտեմ գաղափարները,—դեռ
գտնվում են մեղանում մարդիկ և մինչև անգամ
հրապարակախօսներ էլ, որոնք բարձրաձայն բղա-
վում են. «ուղում էք մեր տունը քանդել, մեր
խեղճ ժողովուրդին մոլորեցնում էք, հարկաւոր
է դրա առաջն առնել»: Եւ ամեն կերպ աշխատում
են այդպիսի հրապարակախօսներին խոչնդոտնե-
րի պատահեցնել և դրանով արդիւնքներ հանելով
նրանց առաջ, ուղում են մեռցնել այդպիսով և
նրանց յայտնած գաղափարներն ևս: Այս ցոյց է
տալիս, որ ոչ միայն մեր հատարակ դասակարգն
է յետ մնացել, այլ նոյն իսկ և իրանց հակապող-
«բարձր» դասակարգը համարողները ևս, որոնց
տրամադրութեան ներքոյ են մեր հասարակական
գործերը:

Բայց ինչ է անում մեր, այսպէս ասած «լըրթ-
ված» դասը: Չէ որ մենք ունենք բժիշկներ,
փաստաբաններ և այլն: Ինչո՞ւ սրանք ևս, որոնք
ապահոված մարդիկ են և միջոց ունեն իրանց
աղջկերանց բարձր ուսում տալու, մինչև այսօր
դեռ այդ քայլը չեն արել. ինչո՞ւ բացառել այս
Արդե՞ք նոյն տեսակետից պիտի նայել և այս և-
րիւթի վրա: Եւ իրաւ, կարծէք, նրանք ևս ժողո-
վրդից անէլ հեռու չեն դնում այս հարցում:
Ահա փառաւոր մի փաստ ևս հաստատելու «ճա-
մանակաւոր իրեւելիստներ» վերնագրով առաջնոր-
դող մտքերը:

Այս տողերը գրելով մենք չենք կարող մատ-
նացոյց չանել հետեւեալ երեւոյթի վրա, որը գուցէ
բացատրութիւն է, բայց և այնպէս կայ: Կան մե-
զանում քաւոր օրիորդներ, որոնք ցանկանում
են բարձր ուսում ստանալ և սրանց արգելողն ոչ
թէ ծնողներն են կամ աղջկանները (ահա ինչն
է դուցէ բացատրութիւն), ինչպէս հարուստների
մէջ, այլ միայն նիւթական միջոցը: Մեր բարեւ-
բարձր անուն կրող հարուստները լաւ կանէին, որ
մի գումար նուիրէին քաւոր օրիորդներին բարձր
ուսում ստանալու համար, կամ որդեկրէին դրանց:
Մեր հաշակաւոր «Բարեգործական» ընկերութեան
վրա յոյս դնել չէ կարելի, որովհետեւ նա իրան
նպատակ չէ ընտրել այդ և վերջապէս այս այն
ընկերութիւնն է, որը բարեհաճեց հրաժարել ամ-
տական 5 ր. օգնութիւն տալ դասաւարդի մի օրի-
որդին, որը ուսանում է Թիֆլիսի իգական դի-
մադիսիում. երեք չորս ամիս քաջքնուց, խոս-
տովանել անհույս յետոյ, փառաւոր բացասական
պատասխան տուց:

Վերջացնելով մեր խօսքը կրկնում ենք.—բար-
աբեւո համար մեր հասարակական, ընկերական,
ընտանեկան կեանքը, հարկաւոր է իգական սե-
ռին բարձր ուսում:

Ժընէվ.

ՆԱՄԱԿ ԳՕՐԻՄՅ

ՅՈՒՆԻՍԻ 5-ին
Այս օրերս Մեղրիից պէտք է գնայի Գորիս: Մեղ-
րի գիւղից մինչև Գորիս, որ 100 վերստ տարա-
ժութիւն է, ճանապարհորդութեան միջոցին իւրա-
քանչիւր քայլափոխում հեղեղից պատճառած վը-
նաների հանդիպեցայ: Քաջարանց և փխրուտ
գիւղերում 100 տարեկան երկու առողջ ծերունի-
ներ կան: Նրանք ասում են թէ իրանց կեան-
քում երբեք այսպիսի անձրեւային տարի տեսած
չեն: Չանդապողբի գաւառում անձրեւը սկսվել է
ապրիլի 27-ից և մինչև այսօր ամենայն օր հեղեղ
է առաջացրել մի օր այս, միւս օր այն գիւղու-
մը: Գիւղացիներին վնասը չափազանց է: Մէկը լա-
ւիս է թէ իր եղին է հեղեղը քշել, միւրը թէ ծա-
ռային, մի այլը թէ տունը, իսկ ընդհանրաւր լալիս
է հեղեղից փչացած ցորենաբոյսի և արօտատեղի
համար: Մի խօսքով Չանդեղուրում անվնաս
մարդ չէ մնացել: Ցորենաբոյսեր կրկին առաջվայ
դրութեանը հասցնելու համար մեծ աշխատու-
թիւն է պահանջում, որովհետեւ հեղեղը բազմա-
թիւ և մեծամեծ ակօսներ է բացել. շատերի էլ

տակի սարկին է բաց արել ու անպէտքացրել:
Ճանապարհները փչացել են, կամուրջներ չը
կան: Մարդ դէպի որ կողմ նայում է, աւերած է
տեսնում: Չը բաւականանալով իմ աչքով տեսած-
ներով, այն գիւղում ուր իջնանել եմ, հաւատալի
աղբիւրներից տեղեկութիւններ եմ քաղել, այդ
տեղեկութիւններից կարելի է այն եզրակացու-
թեան հասնել, թէ ներկայ տարին Չանդեղու-
րի հացը պակաս կը լինի, որովհետեւ անձրեւը
արանի արտերի ցորենի ցոլումը չը թողնելով,
որ աճէ, կոտրել ու դետնին է կպցրել և պողա-
բերութիւնից ձգել: Սար տեղերում չարունակում
է անձրեւը և չէ թողնում, որ հացը աճէ: Միւսի-
սում և Ցաթիկից սկսած մինչև Գորիս արտերը
կարկուտ է թափել. Միսիսի կարկուտը հաստ
քօղի պէս ծածկել է արտերը և երկու օրում հա-
ւել: Անձրեւը Հալիձոր գիւղից մի անգլին տարա-
ժութիւն տեղ, նրա հետ և գիւղի տներըց մի մի
մասը ճաքացրել է և օրից օր ցածրանում է դէ-
պի Որոտնայ գետը: Գիւղացիք սարսափի մէջ են:
Հասնելով Գորիս այնտեղ ևս ոչ պակաս վնասներ
տեսայ: Հեղեղը լոյս աշխարհ է հանել հուշ թաղ-
վածների գանդեր: Երեկ գիշերվայ 8 ժամին
սկսեց սովորական անձրեւը, ապա կամաց-կամաց
տարափի փոխելով առաջացրեց սարսափելի հե-
ղեղ, որ տեղ 45 րոպէս Մերձակայ տնից բարձ-
րացող ձիւն վրա դուրս դալով տեսայ որ դռնից
ու պատուհանից հեղեղ ցլվելով պ. գաւառապետի
թարգման թուրքի տունը, ջրախեղդ է արել
թարգմանին, նրա կնոջ ու դեռահաս աղջկա-
նը: Մի անթարթիւր իր ձիւրորդներով հասաւ
այնտեղ գաւառապետ պ. Կարապէլ և տեղացող
անձրեւի տակին սկսեց օգնութիւն հասցնելու մի-
ջոցները ձեռնարկել. նրան օգնում էին և մի քա-
նի հայեր, որոնք մահ աչքի տակ առած, հանե-
ցին դիակները և այնուհետեւ մաքրեցին տունը
ջրից. այդ տեղ մինչև առաւօտվայ 5 ժամը
Քաղաքամասից անցնելով Գորիս գիւղը տեսայ որ
գիւղացիների վնասը շատ շատ է, տարել է մա-
րագներ, այգիներ, բանջարանոցներ և փչացրել է
երկրագործի շատ աշխատութիւններ: Հեղեղը վը-
նասել է Ղապարի ահագին քարէ կամուրջը:
Իսկ կարկուտը բազի և սագի շատ ձագեր են փը-
չացել:

Մ. Ծ.

ՆԱՄԱԿ ԱՂԱՍՏԱՅՈՅՑ

ՅՈՒՆԻՍԻ 12-ին
Վերջին հեղեղները դէպի Երևան և Ալեքսանդ-
րօպօլ տանող ճանապարհներում արել են այն-
պիսի աւերածներ, որ առժամանակ դէպի այդ
կողմերը ամեն հաղորդակցութիւն կտրված է.
արդէն վեցերորդ օրն է, որ ոչ այստեղից է փոս-
տը Երևան ճանապարհով և ոչ էլ այն տեղերից
է ստացվում: Այդանքով բեռնաւորված ֆուրգոն-
ներից մեծ մասը ճանապարհի կէսից յետ են դա-
ռել Աղստաֆա, իսկ մի մասը, ինչպէս պատմում
են, մնացել է երկու կողմից աւերված ճանա-
պարհի մէջ, անկարող լինելով ոչ առաջ դնալու,
և ոչ էլ յետ դառնալու: Հեղեղը շուտ է տուել
մի ֆուրգոն, տարել է երկու ձի, խեղդել է
հայ ֆուրգոնչիկին և մի պառուս ճանապարհորդ
կնոյ, որ նստած է եղել այդ ֆուրգոնում: Պատ-
մում են, որ անձրեւները չարունակում են գալ և
ոչ մի տեղ դեռ. միջոցներ ձեռք չեն առել ճանա-
պարհը նորոգելու. ասում են Թիֆլիսից հեռագր-
ված է եղել հինգ օր սպասել, որովհետեւ այդ
ժամանակամիջոցում անդադար պիտի անձրեւէ:

Չորս օր առաջ գնացել էի Նուբի. Եւրպից
դէպի այդ քաղաքը տանող ճանապարհը փչացած
էր. հարկաւորված էինք Ալզաչի վրայով անցնել:
Նուբիից եկող ֆուրգոնները յետ էին դառնում
ճանապարհի կէսից: Փոստային հաղորդակցութիւ-
նը դադարած էր և այդ կողմերում Սարապիկի
տեսարան է այս րօպէս Եւրպի կայարանում.
չորս կողմից կայարանը ընդարձակ տարածու-

Թեամբ ծածկված է ջրով, հեղեղը հողին է հաւասարեցրել Մէլիք-Փաշայեանները յայտնի քարվանսարանն և չըջակալ շատ տներ ու խանութներ։ Կոտորվել է հաւթի մի մեծ բեղէնը և մի քանի հազար պուր կէքովին թափվել է այդ կանգնած ջրերի վրա։ Արեւի տակ այդ ջրերը սկսել են կամաց կամաց լիջնել, անտանելի չըբեր են, ճահիճներին բարձրանում է սարսափելի դարձահոտութիւն, այնքան մոծակ կար, որ շունչ չէ կարելի քաշել, և այդ բոլորի հետ միասին մի կատարեալ դժոխք է ներկայացնում այս օրերում Եւլալիք Երկաթուղին դեղ է մի քանի դատարկ վազոններ, որոնց մէջ անաքանդ եղած կոմիսիօնէրները պատուարվել են, և Անդրկովկասեան երկաթուղու վարչութիւնը, որ մինչև այսօր ապրանքների համար էր «за хранение» առնում, այսօր օրական 3 բուրլի իւրաքանչիւր վազօնի համար առնում է այդ ապրանքներ ուղարկող խեղճ կոմիսիօնէրներից նոյն իսկ իրանց կոմիսիօնէրներին ժամանակից աւել պահելուն համար։

Այս գիշերվան թիֆլիսից եկած գնացքը Աշտաֆայում սպասեց 13 ժամ։

Ա. Ապ.

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱՊՐԻԼԻՍԻՑ

Յունիսի 1-ին

Տեղիս ուսումնարանների ուսուցչական խումբը այս տարի էլ չը կարողացաւ խաղաղ անցկացնել, անհամաձայնութիւններ, անտեղի վերաւորանքներ, կրքեր... Կարելի է զարմանալ հոգաբարձուների և աւագ ուսուցչի համբերութեան վրա, որոնք դէպի այս շատ սառնութեամբ և արհամարհանքով են վերաբերվում Սակայն այս վարմունքը, մեր կարծիքով, աւելի քան խելացի է, ըստ որում ինտրիգաներ լարողները, բացի արհամարհանքը, հազիւ թէ ուրիշ պատուի արժանի լինեն։

Ուսուցչական խումբը բաղկացած է 10 անձներից, որոնցից երկուսը—մի օրիորդ և մի պարոն, որ թիֆլիսցի են, զլխաւոր տարածայնութիւնների պատճառն են։ Կրանք միւս ութի դէմ պատերազմ են հրատարակել դոն-քիշոտովեան դրօշակը ձեռքում բռնած... Պէտք է նկատել, որ ընդհանրապէս քաղաքացի երիտասարդները, որոնք բոլորովին անծանօթ են գիւղական կեանքին, գիւղը մոտենում ամեն ինչ անպիտան և անսովոր են գտնում, և առանց հանգամանքների հետ ծանօթանալ աշխատելու, առանց ժողովրդին և նրա սովորութիւններին մօտիկից նայելու, սկսում են արշաւանք, բոլորովին անարդիւն և յաճախ շատ վնասակար արշաւանք, որպիսին միշտ էր Գոն-Քիշօրը քամու ջրաղացների դէմ... և դրա հետեանքը լինում է այն, որ իրանք անընդհանալ լինելով մի բան անելու՝ եղածն էլ փչացնում են ու այդպիսով թէ իրանց և թէ այն գործի, որին իրանք ծառայում են, վարկը բոլորովին վայր գցում հասարակութեան աչքում։ Եւ ցաւալին այն է, որ այդ խելքները շատ ուշ են նկատում իրանց կորուսիւնը, շարունակ աչքերը խփած դոն-քիշոտովեան են անում, երազելով թէ նոր աշխարհ են վերականգնում, չը նայելով որ իրանց ցանկութիւնների մէջ մի մաղ առաջ գնացած չեն լինում և վերջում միայն հասկանում են իրանց դոն-քիշոտովեանը... Ուսումնարանների հոգաբարձուները արդէն որոշել են այս տարի չը վարձել յիշեալներին, որպէս խառնաբարձներ։—Քննութիւնները այստեղի ուսումնարաններում արդէն սկսված են։ Պէտք է գոհ լինել, որովհետեւ այս տարի հասարակութիւնից շատերն են յաճախում քննութիւններին։ Սակայն որչափ ծիծաղելի, նոյնչափ էլ ցաւալի է տեսնել յիշեալ երկու անձանց բռնած դիրքը քննութիւնների ժամանակ, աշխատել հասարակութեան առաջ աշակերտներին կտրել այս կամ այն ուսուցչի առաւելակցից, նրանց վարկը (իրեն թէ) վայր գցելու նպատակով—այդ աւելի քան զրուելի է...

Այս տարին, ինչպէս երեւում է, անձրեւով առատ է ամեն տեղ կովկասում, բայց առաւելագոյն մեր կողմերը։ Մօտ մի ամիս է, գրեթէ ամեն օր սաստիկ փայլատակուածներից և որոտմունքներից յետոյ յորդ անձրեւներ են գալիս և սովորաբար ամբողջ գիւղը առ ու սարսափի մէջ գցում։ Այդպիսի օրերում ամենքը սրտատրոփ սպասում են, թէ ահա անձրեւի ընդհարվելուց յետոյ կէս ժամ չանցած պէտք է լավ չարափուլան խուլ թնդիւնը գիւղի վերինը... ամենքը (մանաւանդ գետի մօտ բնակվողները, որոնք այդպիսի դէպքերում իրանց տներին փակւում են միշտ) սարսափած

սպասում են հեղեղին... բայց բարեբաղդաբար մինչև այժմ դեռ ոչինչ չէ պատահել և այդ դաժնապէս յիշատակներով հարուստ գետակը մեղայտ տարի նշանաւոր վնաս չէ պատճառել։ Նշանաւոր վնաս եւս առում, որովհետեւ աննշան վրանաները միշտ կան ու կան։

Վերին ու Ներքին Ագուլիսներում այս տարի չըբարձր որդնապանների թիւը սովորականից մեծ է և բացի այդ շատերն էլ սովորականից աւելի մեծ քանակութեամբ սերմ են վերցրել։ Մինչև այժմ որդնապաններից ոչ ոք տրտունջ չէ յայտնում որդին անաշտովեան վրա։ Նրանք է այս տարի մեր կողմերում շատ աշող եւք կունենայ չըբարձր։ Այս իսկ պատճառով էլ չըբարձր թիւներն մեղ մօտ այժմ վաճառվում է մինչև օրս այստեղ չը տեսնված և չը լաված գինով, այն է պուրը 80 կօպէկից մինչև 1 ռ., այնպէս որ չը նայելով որդին ներկայ առողջ գրութեան, շատերը, որոնք սեփական տերեւ չունեն, և ստիպված են այդպիսի թանգ գինով տերեւ առնել ու որդներին կերակրել, շատերը կասկածում են, որ մինչև անգամ վնաս կը կրեն և այն դէպքում, երբ բոժոժը աշող լինի, կամ եթէ վնաս չը կրեն, շատ չնչին օգուտ կունենան։ Մի քանի օր է, որ սկսվել է բոժոժաբաղը, դեռ որոշ գին չը կայ։ Ներքին-Ագուլիսում, ինչպէս լսեցինք, բոժոժը ծախվել է պուրը 25 բուրլի։ Սպասում են, որ գինը աւելի կը բարձրանայ։

Տեղիս փոստատան վերաբերութեամբ տարօրինակ կարգադրութիւններ են լինում, կարգադրութիւններ, որոնք բոլորովին ոչնչացնում են փոստատան գոյութիւնը ազդեցիկների համար։ Կարծես մենք այնչափ աշխատանք թափեցինք փոստատան համար միայն այն նպատակով, որ ուրիշները ասեն, թէ ազդեցիկ փոստատան ունեն։ Արդէն հաղորդել եմ, որ անցեալ տարվայ կարգադրութեամբ այժմ այստեղ ոչ մի կապոց չէ ընդունվում առանց մաքսատան կնքի, մաքսատանը գտնվում է Օրդուբաթում, այդ պատճառով էլ ու իր ապրանքը կամենում է փոստով ուղարկել, պարտաւոր է տանել Օրդուբաթ, այնտեղ տանելուց յետոյ, պարզ է, որ այնտեղի փոստով էլ ուղարկվում է։—Այժմ էլ մի ուրիշ կարգադրութիւն է եղել, որ պակաս տարօրինակ չէ, փոստ ստացվում է այստեղ կիրակի և հինգշաբթի օրերը։ Այն կառքը, որ նամակները բերում է, նոյն օրն էլ տանում է մեր նամակները Օրդուբաթ, ուր նրանք մնում են երկու օր և միայն երրորդ օրն են ճանապարհվում, այնպէս որ ազդեցիկը նոր նամակներ ստանալով, եթէ պատահաւոր կամենում են ուղարկել, չեն կարող, որովհետեւ այդ ժամանակ Ագուլիսում նամակների ընդունելութիւն չէ լինում։ Այդպիսի դէպքերում մենք ստիպված ենք լինում 30 կօպէկով վարձել մէկին և մեր հօթ կօպէկանոց նամակ ուղարկել Օրդուբաթ, ուր նամակները ընդունելութիւնը ուղարկվում է երկուշաբթի է լինում։—Ինչ նպատակ է ծառայում Ագուլիսի փոստատանը, երբ թէ մեր նամակները և թէ կապոցները ստիպված ենք Օրդուբաթ տանել։

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Յունիսի 12-ին

Ամիս 10-ին երկինքը Շուշու գլխին մի մեծ պատուհաս կատարեց, կէս ժամում թափվեց այնպիսի կարկուտ, որի նմանը ոչ ոք այստեղ չէ յիշում, կարկուտ, որ հաւ ձուր կալի ունէր և թափվում էր սոսկալի առատութեամբ, նա մի կարճ միջոցում ջրաբեց բոյսերն ու ծառերը, քանդեց, աւերեց շինութիւնները։ Կարկուտի ահուկի հեղեղ էր գոյացել, որ թափվեց աների մէջ, մեծ մեծ գետեր էին գնում փողոցներով, տանելով իրանց հետ շատ խեղճ տների աղքատիկ դարձաբանքը, մեր փողոցները, որ առանց այդ էլ աւերակ էին, աւելի եւ քանդվեցան, եթէ Շուշին մի ժամում կուլ չը գնաց կատարել ջրին, պիտի չորսակալ լինեք Փանահ-խանից, որ չինել է քաղաքը մեծ ու փայլուն բարձրութեան վրա։

Լացն ու վայնասունն ընկել էր տների մէջ, լաց էին լինում գլխաւորապէս ոչ թէ քաղաքի համար, այլ յիշելով որ յունիսին արտերը բարձրացած, հասկանաճած սկսում են դեղնել։ Վտանգը մեծ էր, բայց շուտով ամենքը ուրախացան, խմանալով, որ կարկուտը միայն Շուշու գլխին է թափվել։

Դրան տարի ենք անցկացնում, սպրկել 25-ից սկսած անընդհատ անձրեւներ են թափվում մեր

գլխին։ Ահադին վնասներ են հասել երկրին անձրեւը քերում, տաշում է հողի երեսից մարդկանց ապրուստի յոյսը։ Դարաբաղի անհամար ձորերն ու գետակները լցված են յորդառատ ջրով և տանում են բաղմաթիւ զոհեր մարդկանցից և անալին անասուններից, զոհերի հաշիւը միայն ինքը ջուրն է իմանում։

Սարսափ է տրորւմ ժողովրդի վրա։ Նա այժմ գլուխ է բարձրացրել և միաբերան ասում է, որ այդ սարսափելի փորձանքները իր մեղքերի համար են, անից տուն, խանութից խանութ ընկած փող են հաւաքել և այսօր, կիրակի առաւօտ, մինչև 10 ուղիսար են զոհել և բաժանել։ Մի ամբողջ շաբաթ է ահա, եկեղեցիներում կատարվում է հոկումն, ծնկաչոր «Տէր ողորմա» են ասում։

Բայց անձրեւն էլ չարունակ դալիս է։ Այսօր գլուխ է եղանակ է, մշուշով պատած ենք ամեն կողմից, մանր անձրեւ մինչև ոսկորներն է հասնում, ցեղը սարսափելի է։ Այսօր օրիորդական դպրոցում տարեկան հանդէսն էր, որ շատ լաւ անցաւ, կարգապահ ճառեր, ոտանաւորներ, օրիորդները երգում էին շինգ հողի վերջացրել են ուսման ընթացքը և վկայականներ ստացան։ Առաջնորդը մի ճառով դիմեց բաղմաթիւ հանդիսականներին, յորդորեց բոլորին գործ տեսնել, չը բաւականանալ պատանական ցանկութիւններով։ Սրբազանը ջրեց այն լուրերը, որ մեծ եւամբով տարածվում էին վերջին ժամանակները ժողովրդի մէջ, ասեց որ սոստ են այն լուրերը, որպէս թէ մեր դպրոցները պիտի փակվին միջոցների պակասութեան պատճառով, տղայոց դպրոցում այս տարի բացվում է հինգերորդ դասարան, օրիորդաց դպրոցը պիտի էլ առաջադիմէ։ Եթէ փող չը լինի, ասեց սրբազանը, եւս իմ անձնական միջոցներս կը նուիրեմ և չեմ թողնի, որ դպրոցները վնասվեն։ Ի վերջոյ յորդորեց ամենքին օգնել, փող չը խնայել լուստուրութեան գործի համար։ Դպրոցի տեսուչ պ. Խլխանեան ուսումնական մասի հաշիւը տուեց, և առհասարակ հանդէսի կարգադրութեան համար չորսակալութեան արժանի է պ. Խլխանեան։ Օրիորդաց դպրոցը իր չէզոք դիրքով իր կարգ ու կանոնով մեղ ուրախացրել է ամբողջ տարին։

Բայց այդպէս չէր տղայոց դպրոցը։ Անցեալ կիրակի օր այնտեղ է կատարվել առեկական հանդէս, որին ներկայ են եղել 30—40 մարդ։ Այդ դպրոցի տեսուչը, որ յայտնի է մեր լրագրութեանը իր տխուր հուշակով, ոչ հաշիւ տալի է հարկաւոր համարել և ոչ մի քիչ վայելուչ հանդէս կատարել։ Խօսել է իր սովորական ճառերից մէկը, հուստօրական կէտերով և ստորակէտերով ուղեցել է մեծացնել մի լայն դատարկութիւն։ Արհամարհանքով է խօսել թղթակիցների մասին, որոնք չորս տարի շարունակ նրան հանգստութիւն չեն տուել։ Խեղճ թղթակիցներ, ինչքան անում այժմ, որ ուսումնարանի գործերից ձեռք միանգամայն հեռացնեն, ինչքան ուրախ կը լինեին մի քանի մարդիկ, եթէ դուք աչք և հասկացողութիւն չունեայիք և իրանց կաթիլ կաթիլ թոյն չը խմացնէիք, կտոր կտոր ճշմարտութիւններ ասելով։ Ապա պ. տեսուչը լու. համար ստիպված ենք ուղարկել իրանք թաղիկները ձեռքն է առել և ասել է, որ ինքը հրաժարվում է պաշտօնից, գնում է ուրիշ տեղ։ Բարձր ճանապարհ Լուսում ենք, որ հոգաբարձութիւնը ուղարկ է մի լաւ ճաշ տալ պ. տեսչին, ի տրիտուր նրա բաղմունայ անդործնելութեան։ Բարձր ճաշակ, բարի վայելում և զեղեցիկ լսելիք ենք ցանկանում։ Իսկ ազգային մանկեթներին խաղաղ ճանապարհ դէպի շուկան։

Օրիորդական դպրոցից դուրս գալով, ժողովուրդը գիմեց եկեղեցին, ա. առաջնորդը յայտնեց, որ այդ օր թափօր պիտի կատարվի՝ եղանակների բարեփոխութեան համար թափօրը կատարվեց Շուշու հրապարակում, ներկայ էր անթիւ բաղմաթիւն։ Սրբաձմիկ տեսարան էր։ Ս. առաջնորդը, քահանայներ խումբը, ահագին ամբողջ գլխաւորաբար չըբարձր քանակ ժողովուրդի հաշիւ նուիրական ջերմութեամբ խնդրաւորներ ենք էին անում երկրից, կանաչ բայ էին լինում Տխուր տպաւորութիւն գործեց մի բան, որ այդ միջոցին անցնում էր հրապարակի միջով, մէկը բռնել էր քաղաքի մօտ եղած արտերի ջրաբուխը արած հացահատիկները, տանում էր։ Առաջնորդն այստեղ էլ մի երկար քարոզ ասեց, հրաբերեց շուարած ժողովուրդը դէպի աստուածապաշտութիւն։

Բայց թափօրից յետոյ էլ տարածվում են ժողովրդի մէջ առասպելներ և գուշակութիւններ և զանալի մասին։ Ոմանք գուշակել են, որ այսօր

խով, ժամի 4-ին, պիտի սկսվի նոյնպիսի սաստիկ կարկուտ, որ չորս ժամ պիտի թափվի, եւս տեսայ, որ մի քանի կանաչ հաւաքված մի տեղ սրտակոտոր սպասում են սոսկալի աղէտին։ Միւսները գուշակել են և շատերը հաւատացել են, որ շուտով, տասն օրից յետոյ, «վերջ» պիտի լինի, ջրհեղեղով վերջ։ Մարդ, տեսնելով արքան անձրեւ, ակամայ սկսում է մտածել, որ եթէ ջրհեղեղ էլ չը լինի, բոլոր պիտի փտնեք այդքան խոնաւութիւնից։ Խնքան մեծ գործ կանէր պ. Ասիա-ցին, եթէ վաղօրոք իր տապանը մեղ մօտ ուղարկէր։ Շուշու շատ կան այնպիսի «բարի պտուղներ», որոնց կորուստը համաշխարհային կորուստ կը լինէր, փրկելով դրանց կորուստից, պ. Ասիա-ցին ընդհանուր մարդկութեան բարեբաղդներից մէկը կը դառնար։ Բայց տապանը պէտք է մեծ լինի, որովհետեւ մեղ մօտ շատ կան հաղուադուտ «բարի պտուղներ»։

Այս տեսակ յուսահատական ժամանակ Շուշու շուտ բացվեցաւ մասնաւոր գրադարան, որ պալուստակում է իր մէջ մեր գրականութեան բոլոր յայտնի գործերը, սկսած չորրորդ դարից մինչև մեր օրերը։ Վաղեմի բաղմունքը, վերջապէս ի կատար եղաւ, շատ թեթիւ վճարով ցանկացողը կարող է կարգաւ ստորել։ Տեսնե՛ք այդ հիմնարկութիւնն ինչ տեսակ ազդեցութիւն կանի մեր աշխարհահպտ ծոյց ահ ոցի, մեր մէջդ ահա ի հերոսների վրա, դիրքը կարծիք կը լինի չաղ-չաղ բարձրասանքի, վայրաստութեան սերը քիչ թուլացնել, թէ պէտք է յուսահատ ձեռք թափ տալ և ասել որ այսպէս եկել է, այսպէս էլ կը լինայ։ Ինձ աւելի այս վերջինն է հաւանական թելուծում, մանաւանդ, որ տարին այդքան դառն է, տխուր։ Բայց տեսնե՛ք, չը կայ շարքը, որից բարձր չը ծնվի։

N

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքի լրագիրների խօսքերով, մտադրութիւն կայ կիւնվում 1890 կամ 1891 թվին գիւղատնտեսական մեծ ցուցահանդէս կազմել, խարկովի հանդէսի նման։

«Нов. Время» լրագիրը հաղորդում է, որ պետական խորհրդի վճուի համաձայն վարչակալի համալսարանում թոյլ է տուած 50 բուրլու փոխարէն մեծացնել վճարը մինչև 100 բուրլի դասախօսութիւնները լսելու համար։

«Մշակ» № 59-ի մէջ վերին-Ագուլիսից Ջ. ստորագրութեամբ մի յօդուած էր տպագրված, որը ամբողջապէս վերաբերվում էր Ս. Քրիստափոր եկեղեցու քահանայութեան հարցին։ Այժմ մեղ ուղարկված է վ. Ագուլիսից, 42 հոգու անւանի ազդեցիկների ստորագրութեամբ հետեւեալ հերքումը յիշեալ յօդուածի մասին։ «Մի կողմ թողնելով յօդուածագրի անվայել ակնարկութիւնները, թէ յիշեալ քահանայացուի և թէ ժողովրդի վերաբերմանը, մենք ճշմարտութիւնը պարզելու համար ստիպված ենք ուղարկել իրանք դարձնել նրա մի անվայել դրպարտութեան վրա։ Յօդուածագիրը, ի միջի այլոց, գրում է, որ Ս. Քրիստափոր եկեղեցու ծովից շատերը դեռ այժմ են գլխի ընկել և ընդդէմ էին այդ ընտրութեանը, որ զգոհների թիւը այժմ աւելի շատացել է և որ նրանք աշխատում են համոզեցնել ժողովրդի մնացեալ մասին էլ ուրիշ, մի աւելի պիտանացու մարդ ընտրել քահանայութեան։ Այդ բոլորը սոստ և ծրարատութիւն, մենք Ս. Քրիստափոր եկեղեցու վերաբերմանը ոչ մի տրտունջ և զգոհ հոգի չենք յայտնել մեր քահանայացուի դէմ, մենք գոհ ենք նրանից և ամեն կերպ աշխատում ենք նրան օր առաջ քահանայացած տեսնել։»

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ մեզ գրում են։ «Ամիս 3-ին, երեկոյան, այստեղ տեղաց բաւական խոշոր կարկուտ, ոսկայն բարեբաղդաբար շուտ կարկուց, եթէ ոչ մեծ վնաս կարող էր հասցնել Նրեանի այգիներին։»

Մեզ հաղորդում են, որ երեւանի վաճառական Ա. Աֆրիկեան, գնալով Դաւալու գիւղը, այդտեղի նոր շինվելի ուսումնարանի օգուտն խոստացել է միանուագ 100 բուրլի և տարուց տարի էլ 20-ական բուրլի։

Մեր ստացած բաղմաթիւ նամակներից երևում է, որ այս տարի Նրեանի քահանգում անթիւ

Աւարտ-Ունեւորակի հետ յայտնի է ամենքին. ևս պահպանում եմ այդ դաշնակցութիւնը դերմանա- կան հաւատարմութեամբ ոչ միայն այն պատճա- րով, որ այդ դաշնակցութիւնը կապւած է, բայց և այն պատճառով, որ ես այդ պաշտպանողական դաշնակցութիւնը համարում եմ հիմք եւրոպական հաւատարմութեան, և նոյնպէս դերմանական պատմութեան ուստ, որի պահպանութեանը այժմ նպատակ է ամբողջ դերմանական ժողովրդի հասարակական կարծիքը և որը համապատաս- խանում է եւրոպական հասարակ միջազգային ի- րաւունքին, որի հիման վրա, անկասկած, նա գործում էր մինչև 1866 թւականը: Նոյնպիսի պատմական յարաբերութիւններ, նոյնպիսի ազ- գային պահանջներ միայնում են մեզ խաղիայի հետ. երկու պետութիւններն ևս կամենում են խաղաղութեան բարիքները պահպանել, որպէս զի ապրին նորերս ձեռք բերած միութիւնը հա- տատուն դարձնելու համար, ազգային հիմնարկու- թիւնների զարգացման համար և իրանց ծաղկա- նը նպատակու համար: Աւարտ-Ունեւորակի և խաղիայի հետ մեր ունեցած համաձայնութիւննե- րը, որոնք խաղիայի պէտք է ասեմ, թոյլ են տա- լիս ինձ խնամքով պահպանել իմ անձնական բա- րեկամութիւնը Ռուսաց կայսրի հետ և արդէն հարկւր տարի դոյրութիւն ունեցող խաղաղ յա- րաբերութիւնները մեր հարկան ուսաց թագա- ւորութեան հետ, և այդ բանը համապատասխա- նում է թէ իմ անձնական զգացմունքներին և թէ Գերմանիայի շահերին: Խաղաղութիւնը պահպա- նելուն բարեխղճաբար նպատակու գործում ես մտնում եմ հայրենիքի ծառայութեան մէջ նոյն պատրաստակամութեամբ, որպիսի պատրաստա- կանութեամբ յանձն եմ առնում զորքին վերա- բերելու հոգը, մի և նոյն ժամանակ ուրախա- նում եմ պետութիւնների հետ մեր ունեցած ա- ւանդական յարաբերութիւնների համար, որովհե- տե ևս այդ յարաբերութիւնները նպատակ էին վերոյիշեալ ուղղութիւններից առաջնում եղած ձգտումներին: Յոյս դնելով Աստուծու վրա և վստահ լինելով ժողովրդի ոյժերի վրա, ես յոյս ունեմ, որ անսահման երկար ժամանակ միջոց կունենանք պաշտպանել և կատարելագործել այն, ինչ որ կուով էր ձեռք բերած իմ երկու նա- խորքների վարչութեան ժամանակ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍՍ			
Յունիսի 14-ին			
Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ.	107	75	
Համբուրգի վրա 100 մարկ —	52	75	
Փարիզի վրա 100 ֆրանկ —	42	85	
Ռսկի — արծէ —	8	82	
Մաքսային կուպոններ —	173	50	
Արծաթ —	1	36	
Բորսային գիւնդաներ —	60%	71/4%	
Պետակ. բանկ. 50/0 տոմս 1-ին շրջանի	99	25	
— — — — — 2-րդ —	98	75	
— — — — — 3-րդ —	98	25	
— — — — — 4-րդ —	98	50	
— — — — — 5-րդ —	98	50	
— — — — — 6-րդ —	—	—	
Նոր 40/0 փոխառութիւն —	82	75	
Արեւելեան 50/0 փոխառութիւն. 1-ին շրջ.	100	—	
— — — — — 2-րդ —	98	75	
— — — — — 3-րդ —	98	50	
Ներքին 50/0 անալիս փոխառութիւն.	274	75	
— — — — — երկրորդ —	248	50	
51/2% ընդամ. — — — — —	102	—	
Ռսկեայ ընդամ. — — — — —	188	62	
Եօթեւորդը կոնսոլիդաց. փոխառու-	—	—	
թիւն. — — — — —	163	—	
Նոր երկաթուղային ընդամ. —	98	75	
50/0 գրաւական թղթի կալուած.	—	—	
փոխ. կրեդ. ընդ. — — — — —	168	—	
Գրաւ. թղ. Արեւ. բանկի — — —	97	37	
51/2% գրաւական թղթի կալուածի	—	—	
կալուած բանկի. — — — — —	98	50	
60/0 գրաւակ. թղ. Խաղիայի կալ. բան.	101	25	
— — — — — Պետական —	101	—	
— — — — — Պետ. Զուլակ. —	100	87	
— — — — — Կիւնով —	100	50	
— — — — — Մասկովայի —	101	75	
— — — — — Բեսարաբ. Զալի. —	100	50	
— — — — — Նիժ. Սամար. —	100	50	
— — — — — Վիլնայի —	101	—	
— — — — — Թիֆլիսի — 27 և 43 տ. 98	—	—	
— — — — — Բուխարայի — 18 և 43 տ. 98	—	—	
Վ. Օլժոնկո-Կամսկի բանկի ակցիաները	720	—	
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընդ.	267	50	
Ռիգինսկ-Բոլոգոյի ընդ. — — — — —	82	25	
Ս. Պետերբուրգի քաղաքային օրդի-	—	—	
ղացիների. — — — — —	94	—	
Մասկովայի քաղաք. օրդիացիների	95	—	
Օրդոսայի — — — — —	93	25	
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընդ. —	82	50	
Ս. Պետերբուրգի բորսայի արամատրութիւնը	—	—	
հանդարտ է:	—	—	

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

ԿԵՐՈՍԻՆԻ ՊԱՀԵՍՏ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

ԴԵՊՈ ԼԱՄՊԱՆԵՐԻ ՊԱՍՏԱՌՆԵՐԻ ԵՒ ՄԷԲԷԼԻ

Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆՏԻ

գտնվում է Վոլգայի մոտ, Կասպեան-Սև-Ծովի նաւթարդիւնագործական ընկերու- թեան պահեստում, նախկին Կարովկովի

ԿԵՐՈՍԻՆԻ ԵՒ ՄԱԶՈՒՏԻ ՎԱՋԱՌՈՒՄԸ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒ- ԹԵԱՄԲ

12—25 (Հ)

ЗУБНЫЯ СРЕДСТВА А. ШТЕХЕРЬ

ПОДОЛЬСКІЯ ЗУБНЫЯ КАПЛИ

ГИГИЕНИЧЕСКІЙ КОКАИНОВЫЙ ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ

ГИГИЕНИЧЕСКІЙ ЗУБН. ПОРОШОКЪ

СКЛАДЪ ВО ВСЯХЪ АПТЕКАХЪ И АПТЕК. МАГАЗ.

ՊՐՈՎԻԶՈՐ Ա. ՇՏԷԻԼԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄԵՆԻ ՑԱԽԻ ԵՒ ՓՁԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՐԻՈՒՆԱՆ ԱՏԱՄԵՆԱԴԵՐ ԿԱԹԻՆԵՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՊԱՑԻՆԵԱՆ ԱՏԱՄԵՆՈՒՆ ԷԼԻԿ.

ՄԻՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄԵՆՈՒՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

НЪ МЕЦКАЯ ГОСТИНИЦА ВЪ ВАРШАВѢ

31. Дзугая улнца 31.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ

ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, Դուգայ փողոց, 31. Գտնվում է քաղաքի նոյն խաչ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ կենտրոնում, ԹԱՏՐՈՆԵՐԻ և բոլոր ՊԱՇՏՈՆԱՑՆԵՐԻ կողքին: 90 սենականեր, շքեղ կերպով յարմարեցրած, 30 կողակից մինչև 3 բուրբի օ- ռական վարձով:

ԿՈՆԴԻՏԵՐԻԱ և ԲԷՍՏՈՐԱՆ

Ճաշեր 30 կողակից մինչև 1 բուրբի:

ՕՄԵՆԲՈՒՄՆԵՐ և ԿԱՌՔԵՐ երկաթուղու բոլոր գնացքների համար:

ԿԱՌՔԵՐԻ վարձը չափաւոր գներով:

(Հ)

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕНОЕ

Россійское Общество Застрахованія капиталовъ и доходовъ

УТВЕРЖД. ВЪ 1835 ГОДУ

ԲԱՐՁՐԱԳՈՑՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ

Ռուսաց ընկերութիւն կապիտալների և եկամուտների ապահովութեան

հիմնված 1835 թվին

Ամենահին և միակ ռուսաց ընկերութիւն, որը բացառապէս պարագում է կեսերի (կապիտալների և եկամուտների) ապահովութեան գործով, փոխադարձութեան սկզբունքների վրա:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՄԱՄԱԳԼՈՒԻ 8,000,000 ՐՈՒԲԼԻ

- Կապիտալների ապահովութիւնը ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ համար, ապահովացնողի մահուան դէպքում:
- Կապիտալների ապահովութիւնը ԾԵՐՈՒԹԻՆԸ և երեխաների համար ԲԱԺԻՆԸՐԸ ապահովացնելու համար:
- Եկամուտների և ցմահ նշանակվող ԹՈՇԱԿՆԵՐԻ ապահովութիւնը:

Տարիքները և մանրամասն տեղեկութիւնները ուղարկվում են անվարձ ԳԼԽԱՌՈՐ ԳՈՐԾԱԿԱ- ԼՈՒԹԵԱՆ կողմից, որը գտնվում է Թիֆլիսում, Վախթանգի փողոց, տուն № 24.

Գլխաւոր Աղէնտ և Ցետուէ Կովկասեան երկրի համար՝ Ն. Ն. ԳՐՈՒՋԷՆԵՐԳ:

ՊԱՀԱՆՁՎՈՒՄ ԵՆ ԱԳԷՆՏՆԵՐ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

Թիֆլիսի և Կովկասեան ուրիշ քաղաքների համար:

8—32 (Հ)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ВЪ КОДЖОРАХЪ

Дача Можневской (бывшая Ломидзе), около Телеграфной станции и Почты, отдае- ся въ НАЙМЫ.

Спросить или въ редакціи „Мпакъ“, или у хозяйки дачи въ Коджорахъ.

1—3

ԲԱՆԿԱՑԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

Ա. ՓՐԻԴՈՆՈՎ ԵՒ ԸՆԿ.

Առնում է և ծախում տոկոսաբեր արժեթղթեր, փոխարկում է. փողեր, ապահովա- գրում է I և II փոխառութիւնների խաղաղութեան առմանքները ՎԱՌՍՈՒՆ կողմէ- կով: Պ.պ. օտարաքաղաքացիներին զրաւանակը խնդրում է ուղարկել և փոստի ծախսը, նոյնպէս և ամեն մի անորոշաբեր համար 15 կոպ. գրուադաւոր (գերբօլոյ) մարկայի համար:

1—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԵԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Հինգշաբթի, յունիսի 23-ին, ԱՐՄԵՆԻԱ (ARMÉNIE) շոգենաւը, նաւապետ ԳԱ- ՐԻԳ (GARRIGUES) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլի և Մարսել: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմբոլու տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում նախկին Ար- ծրունի գալլերէում, № 103:

3—4

Միայնակ մի մարդ կամենում է ԿՈՋՈՐՈՒՄ ունենալ մի բնակարան, առանձին կամ ընտանիքում, բոլոր յարմարութիւններով, մի կամ երկու սենեակ:

Դիմել „Մշակի“ խմբագրութեանը:

2—3

Երկու ուսուցիչներ պատրաստում են աշակերտներին Գիմնազիայի և Ներ- սիսիան դպրանոցի առաջին և երկրորդ դասարանների համար:

Հասցէն իմանալ „Մշակի“ խմբագրատանը:

3—3